Հաստատում եմ՝
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

Վ. Կարապետյան

ԱՈՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

23.10.2015թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 21.10.2015թ.-ի թիվ 122 կարգադրությունը, Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունում 2015թ.-ի 3-րդ եռամսյակի գնումների գործընթացի համապատասխանության աուդիտ, ներքին աուդիտի բաժնի ներքին աուդիտորներ Ն.Կարապետյանի և Հ.Ավետիսյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեցին մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ռ.Հայրապետյանը, /գնումների համակարգող/, քաղաքաշինության վարչության գլ.մասնագետ Ռ.Մինասյանը, քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետ Գ.Ղազարյանը, /պատասխանատու ստորաբաժանման ղեկավար/:

Աուդիտի հիմնական ուղղությունները.

ա/Գնումների համապատասխանությունը <<Գնումների մասին>> ՀՀ օրենսդրության պահանջներին.

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքը կատարեցին Ն.Կարապետյանն և Հ.Ավետիսյանը: Ունեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն, ֆինանսական վերահսկողության և ներքին աուդիտորի երկու տարվա փորձ:

<u>Վարչությունում ռիսկի գնահատումը և ներքին վերահսկողությունը</u>

Ըստ ձեռք բերած տվյալների ռիսկը և ներքին վերահսկողությունը գնահատելու համար հիմք ենք ընդունել ՈՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ստանդարտը:

Վերահսկողության ռիսկի նախնական գնահատումը թույլ է տալիս եզրահանգելու, որ գնումների գործընթացը իրականացվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենսդրության պահանջներին գնումների համապատասխանության աուդիտ :

Մարզպետարանի ապարատի պահպանման ծախսեր:

Ապրանքների ձեռք բերում /գնում/:

Համակարգչային պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի գնում՝ՎՁՄՇՀԱՊՁԲ-15/8-6:Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 21.07.2015թ.-ի թիվ 131 և թիվ 132 հրամանով սահմանվել է պատասխանատու ստորաբաժանում /Գ.Ղազարյան/, գնումների համակարգող /Ռ.Հայրապետյան/ ,գնահատող հանձնաժողով: Մրցույթին մասնակցելու հայտ են ներկայացրել 5 կազմակերպություն:Գնահատող հանձնաժողովը մրցույթի հաղթող է ճանաչել <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ն, որին առաջարկվել է կնքել գնման պայմանագիր:Տուժանքի մասին համաձայնության առկայության պայմաններում կնքվել է 2388000 դրամի գնման պայմանագիր:Տնտեսվել է 252000 դրամ:Պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել 25.12.2015թ.-ը ներառյալ:

Կատարողականի աուդիտ:Առկա են գնման և վճարման ժամանակացույցերը:24.09.2015թ.-ի դրությամբ գնման պայմանագրով գնումը ամբողջությամբ կատարված է :05.10.2015թ.-ի դրությամբ կատարված գնման պայմանագրով վճարումը ամբողջությամբ կատարված է :

Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում՝ ՎՁՄՇՀԾՁԲ-11/3-5: Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 30.03.2015թ.-ի թիվ 41 և 22.05.2015 թ.-ի թիվ 76-2 հրամանով սահմանվել է պատասխանատու ստորաբաժանում/Գ.Ղազարյան/, գնումների համակարգող /Ռ.Հայրապետյան/, գնահատող հանձնաժողով: Մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել 1 կազմակերպություն: Գնահատող հանձնաժողովը մրցույթի հաղթող է ճանաչել <<Վիվեկա>> ՍՊԸ-ն, որին առաջարկվել է կնքել գնման պայմանագիր: Տուժանքի մասին համաձայնության առկայության պայմաններում կնքվել է 1133900 դրամի գնման պայմանագիր: Տնտեսվել է 378100դրամ: Պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել 25.12.2015թ.-ը ներառյալ:

Կատարողականի աուդիտ:Առկա են գնման և վճարման ժամանակացույցերը:Առ 08.10.2015թ.-ի դրությամբ կատարվել է 761340 դրամի չափով ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում:

Նախագծահետազոտական աշխատանքների ձեռք բերման գնում ՎՁՄ ԲԸԱՀ ԱՇՁԲ – 01/1:

Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 28.07.2015թ.-ի թիվ 135 և 28.07.2015 թ.-ի թիվ 136 հրամանով սահմանվել է պատասխանատու ստորաբաժանում մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչությունը /պ/ս ղեկավար Ա.Հովսեփյան/, գնումների համակարգող /Ռ.Հայրապետյան/,գնահատող հանձնաժողով : Մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել 3 կազմակերպություն:Գնահատող հանձնաժողովը մրցույթի հաղթող է ճանաչել <<Նորաշեն>>ՆՏ ԱԿ-ը, որին առաջարկվել է կնքել գնման պայմանագիր: Տուժանքի մասին համաձայնության առկայության պայմաններում կնքվել է 6107400 դրամի գնման պայմանագիր: Տնտեսվել է 678600 դրամ: Պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել 26.08.2015թ.-ը ներառյալ:

Կատարողականի աուդիտ:Առկա են գնման և վճարման ժամանակացույցերը:Խախտվել է պայմանագրի կատարման ժամկետը:Կատարողը աշխատանքները հանձնել է պատվիրատուին 30.09.2015թ.-ին;Պայմանագրի կատարման ժամկետի խախտման արդյունքում պատվիրատուր կողմից կիրառվել է տույժ 107000 դրամի չափով: 13.10.2015թ.-ի դրությամբ կատարված գնման պայմանագրով կատարվել է 6000400 դրամի չափով վճարում :

Եզրակացություն՝ Գնումները համապատասխանում են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

Ներքին աուդիտորներ՝ Ն.Կարապետյան

Հ. Ավետիսյան

Գնումների համակարգողներ՝ Ռ. Հայրապետյան

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ռ.Մինասյան

Գ.Ղազարյան